Պարտավոր ենք գտնել Գյումրիի ահաբեկչության պատճառով ծագած հարցերի պատասխանները

Գյումրիում իրականացված ոճիրը սովորական հանցագործություն չէ, դա հատուկ նպատակներ հետապնդող ահաբեկչություն է, որի այլ արտահայտություններից են Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության սահմանների վրա իրականացված դիվերսիոն հարձակումները, Սիրիայի Հալեպ քաղաքում Հայ Կաթոլիկ եկեղեցու հրետակոծումը, Ֆրանսիայի Մարսել քաղաքում հայ երիտասարդի սպանությունը:

Ակնհայտ է, որ քաղաքակրթությունների բախում հրահրող քաղաքակրթական այս ճգնաժամը, որը համակել է աշխարհը, փորձ է արվում վերածել հայ-արաբական, հայ-ռուսական եւ այլ կարգի ճգնաժամերի: Տեսանելի է, որ այդ նոր տիպի ահաբեկչություններն ուղղված են հայության եւ Հայաստանի դեմ:

1. Ըստ այդմ, Գյումրիի ոճրագործության հետ կապված, հայության խնդիրների մեջ է մտնում ահաբեկչության իրականացնողների, կազմակերպիչների, նպատակների բացահայտումը եւ այդպես դրա հետեւանքների չեզոքացումը: Զուգահեռ, այս ծանր ու պատասխանատու պահին, կարեւոր է զորակցությունը Գյումրիի բնակչությանը, երիտասարդությանը, հասարակական-քաղաքական կազմակերպություններին, լրատվամիջոցներին, Շիրակի հոգեւոր թեմին, քաղաքային իշխանություններին:

2. Իսկ հայության ապագա խնդիրների շարքում առկա է ինքնապաշտպանության կազմակերպման գործընթացի սկզբնավորումը՝ ինքնակազմակերպման ամենաբարձր մակարդակներում, քանի որ վերջին տասնամյակների ուսումնասիրությունների հիման վրա վերջնականապես բացահայտված է հայության եւ Հայաստանի նկատմամբ ծրագրված եւ գործարկման դրված թշնամական-ռասիստական օրակարգը: Դրան պետք է հակադրել հայկական օրակարգը, որն իր մեջ պետք է ներառի մի քանի բաղադրիչներ. իրավական-քաղաքական, խորհրդատվական-կազմակերպչական, տեղեկատվական-քարոզչական, պաշտպանական:

Առաջիկա տարիներին հայկական կյանքն աշխարհում ամենուր պարտավոր է կազմակերպվել հենց այս սկզբունքների հիման վրա՝ չեզոքացնելու համար հայ մարդու, հայ համայնքների, Հայոց քաղաքակրթական արժեքների, հայության եւ Հայաստանի նկատմամբ իրականացվող թշնամական ամեն տեսակի գործողություն ու ծրագիր, որոնց

ահագնությունն ու սպառնալիքի բարձր աստիճանը բացահայտվում է 2015-ի առաջին իսկ օրերին իրականացված վերոնշյալ ահաբեկչական գործողություններով:

Տիգրան Փաշաբեզյան
Արևմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետ

17.01.2015 թ.